ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թվականի **N 01-Ա**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 1,0172 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզի դատախազության 24.12.2025 թվականի թիվ 66/3962-25 գրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1.Վայք համայնքի Սարավան բնակավայրում գտնվող 1,0172 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, 10-039-0321-0004 կադաստրային ծածկագրով հողամասը, հողատեսքը՝ արոտավայր, ճանաչել որպես համայնքային սեփականություն:

2.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2026թ. հունվարի 05
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

3601, ք.Եղեգնաձոր, Զորավար Անդրանիկի 4 հեռ. (0.281) 2.55.02, ֆաքս(0.281) 2.55.02

,, ,, _____ **2025թ.** **№** 66

Վայք համայնքի ղեկավար
Մ.Մաթևոսյանին

Հարգելի՛ պարոն Մաթևոսյան,

Թիվ ՀԿԴ/0092/02/24 հակակոռուպցիոն քաղաքացիական գործով ՀՀ հակակոռուպցիոն դատարանի 2025 թվականի մայիսի 08-ի վճռով բավարարվել է Վայոց ձորի մարզի դատախազության հայցը և անվավեր են ճանաչվել Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Սարավան բնակավայրում գտնվող 10-039-0321-0004 կադաստրային ծածկագրով 1.0172 հա մակերեսով հողամասն օտարելու վերաբերյալ 2008 թվականի փետրվարի 28-ին կայացած աճուրդը, Աղունիկ Սեյրանի Օհանյանի հետ կնքված թիվ 3 պայմանագիրը և դրա հիման վրա Աղունիկ Սեյրանի Օհանյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը, 2019 թվականի դեկտեմբերի 26-ին կնքված նվիրատվության պայմանագիրը և դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը՝ վերականգնելով նշված հողամասի նկատմամբ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի սեփականությունը:

Նշված հողամասի նկատմամբ ՀՀ կադաստրի կոմիտեում 23.12.2025թ. գրանցվել է Վայք համայնքի սեփականության իրավունքը:

Կից ներկայացվում են թիվ ՀԿԴ/0092/02/24 հակակոռուպցիոն քաղաքացիական գործով Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն դատարանի վճռի և սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականների պատճենները՝ գրանցումից բխող անհրաժեշտ գործողություններ իրականացնելու և արդյունքների մասին սեղմ ժամկետում մարզի դատախազություն հաղորդելու նպատակով:

Առդիր՝ 13 թերթ:

Հարգանքով՝
Մարզի դատախազ **Ա.Ավետիսյան**

X _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թվականի N 02-Ա

ԱՎԵՏԻՔ ՀԱՅՐԻԿԻ ԻԽՏԻԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏԻՐՈՍ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Իրավունքը հաստատած փաստաթղթեր չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 2008 թվականի հունիսի 10-ի ՀՕ-117 օրենքով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Ճանաչել քաղաքացի Ավետիք Հայրիկի Իխտիարյանին (ծնված՝ 15.09.1957թ) Վայք համայնք, գ. Մարտիրոս, 9-րդ փողոց, 7-րդ նրբանցք, 7 հողամաս հասցեում գտնվող 0,1000 հա մակերեսով հողամասի (ծածկագիր՝10-033-0124-0003), և հողամասի վրա առկա շինությունների (բնակելի տուն՝ 22.60 քմ, բնակելի տուն՝ 42.80 քմ, անասնաշենք՝ 10.50 քմ) նկատմամբ սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի առաջացնում սերվիտուտ:
3. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2026թ. հունվարի 07
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թվականի N 03-Ա

ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ԳՐԱՖԻԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 164 -րդ հոդվածի 2-րդ մասով և Վայք համայնքի ղեկավարի 2024 թվականի նոյեմբերի 1-ի «Վայքի համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգը հաստատելու և Վայք համայնքի ղեկավարի 2024 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 310-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 327-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 22-րդ կետի համաձայն.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Հաստատել Վայքի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների և համայնքային ենթակայության կազմակերպությունների տնօրենների 2026 թվականի ամենամյա արձակուրդների գրաֆիկը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2026թ. հունվարի 07
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թվականի N 04-Ա

ՔԱՋԻԿ ԶԱՎԵՆԻ ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,005 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1.Վայք համայնքի բնակիչ Քաջիկ Զավենի Կոստանյանին սեփականության իրավունքով պատկանող, Վայք համայնքի Վայք քաղաքում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության 0,005 հա մակերեսով, 10-003-0010-0052 կադաստրային ծածկագրով հողամասը հասցեավորել՝ Վայք համայնք, ք. Վայք, Ջերմուկի խճուղի, 7/3 հողամաս:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2026թ. հունվարի 12
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թվականի N **05-Ա**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ ԼԱՈՒՐԱ ՄՀԵՐԻ ՄՀԵՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆԱԺ /ՕԳՆԱԿԱՆ/ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, ՀՀ Կառավարության 02.06.2016թ. թիվ 631-Ն որոշմամբ ընդունված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 3-րդ գլխի 9-րդ կետի 14-րդ ենթակետի դրույթներով, և հիմք ընդունելով Վայք համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի եզրակացությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1.Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի 22 շենք, բն. 16 հասցեի բնակչուհի Լաուրա Միերի Միերյանի նկատմամբ սահմանել պատրոնաժ /օգնական/:
2.Որպես պատրոն /օգնական/ նշանակել հարսին՝ Աստղիկ Հրանտի Հովսեփյանին:
3.Պատրոնին /օգնականին/ իրավունք է վերապահվում Լաուրա Միերյանի համաձայնությամբ կատարել ապրուստի ու նրա կենցաղային կարիքների բավարարմանն ուղղված կենցաղային և այլ գործարքներ:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2026թ. հունվարի 16
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թվականի N **06-Ա**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԲՈՐԻՍ ԱՐԳԱՄԻ ՍԱՅԱԴՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆԱԺ /ՕԳՆԱԿԱՆ/ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, ՀՀ Կառավարության 02.06.2016թ. թիվ 631-Ն որոշմամբ ընդունված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 3-րդ գլխի 9-րդ կետի 14-րդ ենթակետի դրույթներով, և հիմք ընդունելով Վայք համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի եզրակացությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1.Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի 22 շենք, բն. 16 հասցեի բնակիչ Բորիս Արգամի Սայադյանի նկատմամբ սահմանել պատրոնաժ /օգնական/:
2.Որպես պատրոն /օգնական/ նշանակել հարսին՝ Աստղիկ Հրանտի Հովսեփյանին:
3.Պատրոնին /օգնականին/ իրավունք է վերապահվում Բորիս Սայադյանի համաձայնությամբ կատարել ապրուստի ու նրա կենցաղային կարիքների բավարարմանն ուղղված կենցաղային և այլ գործարքներ:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2026թ. հունվարի 16
ք. Վայք